ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 մարտի 2025 թվականի N 263 - Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 2060-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԻ ՇԱՐՔ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներին և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 57.1-ին կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակում կատարել վերաբաշխում, N 3 աղյուսակում՝ փոփոխություններ և լրացումներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի

կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշման NN 3, 4, 5, 9, 9.1 և 10 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8 և 9 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝

1)2023 թվականի նոյեմբերի 10-ի N ՀՀԿԳՄՄՆԳՀԾՁԲ-23/68 կապալային աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարած՝ «Լիլ-Ռուզ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել 123.75 հազար դրամ գումար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով՝ որպես գնում չհանդիսացող ծախս (ԳՉԾ).

2) 2024 թվականի ապրիլի 10-ի N ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-24/38 կապալային աշխատանքների կատարման պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարած՝ «Շին Գրիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել 1,410.55 հազար դրամ գումար՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածով՝ որպես գնում չհանդիսացող ծախս (ԳՉԾ):

3. Թույլատրել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝

1) սույն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի կատարումն ապահովելու նպատակով կատարել ձեռք բերվող աշխատանքների ծավալների ավելացում՝ փոփոխություն կատարելով 2024 թվականի ապրիլի 10-ին «Շին Գրիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքված՝ պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման N ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-24/38 պայմանագրում՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետի 2-րդ նախադասության պահանջները.

2) սույն որոշման N 4 հավելվածով հատկացված գումարի շրջանակներում «Հ. Թումանյանի թանգարան» ՊՈԱԿ-ին ամրացված շենքի վերակառուցման

կապալային աշխատանքների դիմաց վճարել ըստ «ԿԻՐ-ՔԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 29.11.2024 թվականին ներկայացված կատարողական ակտերի:

4. Թույլատրել «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին՝

1) տեղեկատվական մոդուլային կենտրոնի կառուցման և «Լոռի Բերդ» քաղաքատեղի» պատմամշակութային արգելոցի հարակից տարածքում տեղակայման կապալային աշխատանքների ձեռքբերման համար 2024 թվականի ապրիլի 16-ին «ԷԼԱ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքված N ՊՄԱԹ-ԳՀԱՇՁԲ-24/04-2 պայմանագրում կատարել փոփոխություն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը սահմանելով մինչև 2025 թվականի մայիսի 6-ը՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները.

2) տեղեկատվական մոդուլային կենտրոնի կառուցման և «Զորաց քարեր» բնակատեղի» պատմամշակութային արգելոցի հարակից տարածքում տեղակայման կապալային աշխատանքների ձեռքբերման համար 2024 թվականի ապրիլի 16-ին «ԷԼԱ ՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքված N ՊՄԱԹ-ԳՀԱՇՁԲ-24/08 պայմանագրում կատարել փոփոխություն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը սահմանելով մինչև 2025 թվականի նոյեմբերի 4-ը՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

07.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ